

Յովհաննէս Օծնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի ձեռագրախմբերը եւ  
խմբագրութիւնները

Ալեքսան Յակոբեան

1. XIX դ. սկսուած «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի գիտական հետազոտութիւնը բացայայտեց մի քանի տասնեակ գրչագրերի պատկանելութիւնն առանձին ձեռագրախմբերի եւ խմբագրութիւնների: 60-ից աւելի գրչագրերի համեմատութեամբ Վ. Յակոբեանի աշխատասիրած «Կանոնագիրք Հայոց» վերտառութեամբ երկու հատորներից առաջինը (1964 թ.) յաւակնում էր ամբողջացնելու Յովհաննէս Օծնեցու ժողովածոյի գիտա-քննական հրատարակութիւնը: Սակայն ձեռագրական նիւթի ամբողջական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ հրատարակուած բնագիրն իրականում արտացոլում է ոչ թէ «Կանոնագիրք Հայոց»-ի նախօրինակը, այլ վերջինիս հետագայ վերամշակումներից յետոյ ի յայտ եկած տարբերակներից մէկը՝ ներկայացուած հնագոյն գրչագրում (Նոր Զուղա, 1098 թ.) եւ նրան յարող ձեռագրախմբերում: Ըստ Վ. Յակոբեանի՝ հնագոյն գրչագրի առաջին 24 կանոնախմբերը ուղղակիօրէն արտացոլում են օծնեցիական կանոնական ժողովածոն, որին հետագայում աւելացուել են մէկուկէս տասնեակ այլ բնագրեր, իսկ X դարի վերջում հաւաքուած 38-40 կանոնախմբերի վերադասաւորման արդիւնքում կազմուել է Բ ձեռագրախմբի՝ նոյնպէս ընդհանուր յօդուածահամարներ եւ առարկայական ցանկ ունեցող գրչագրերի մայր օրինակը, որտեղ Օծնեցու կանոնները 24-րդը չեն, այլ 37-րդը: Մէկ տասնեակից աւելի այն ձեռագրերը, որոնք չեն պատկանում Կանոնագրքի ԱԲ ձեռագրախմբերին եւ մասնաւորապէս չունեն ընդհանուր եւ առարկայական ցանկեր (այդ թւում՝ մասնագէտներին բաւականին ծանօթ ՄՍ N 659 գրչագիրը՝ 1368 թ.), նա գնահատել է իբրեւ Կանոնագրքի հետագայ համառօտման արդիւնք:

2. Իրականում Վ. Յակոբեանը եւս նկատել է, որ ԱԲ ձեռագրախմբերից տարբերուող գրչագրերը պարունակում են «լրացուցիչ» կանոնական նիւթեր կամ յայտնի կանոնախմբերի «լրացուցիչ» հատուածներ, որոնք յաճախ աւելի մեծ համապատասխանութիւն են դրսեւորում առանձին կանոնախմբերի այլալեզու կամ հայերէն բնօրինակների հետ: Նոր համեմատութիւնը ցոյց է տալիս, որ աղբիւրների վերհանման ու ներառման ակնյայտ աշխատանքը չէր կարող կատարուել «օծնեցիական» համակարգուած բնագրի ապադասականացուած եւ պակասաւոր ծաւալի վրայ, հետեւաբար Օծնեցու կազմած կանոնական հաւաքածոյին աւելի հարազատ պէտք է համարել հինց ՄՍ N 659 եւ 657 գրչագրերում (մեր գիտա-քննական բնագրում՝ E եւ e<sub>1</sub>) ներկայացուած

տարբերակի մայր օրինակը, առանց «դասականացման» տարրերի: Օձնեցու հաւաքածոյի սկզբնագիրն առանց արմատական խմբագրումների մեզ է հասել նաեւ մի պատառիկում եւ 7 կանոնախումբ ընդգրկող մի համառօտ «Կանոնգրքի» 8 գրչագրերում (e<sub>2</sub>): «Չխմբագրուած» մի ձեռագիր զուգադիր օգտագործել է նաեւ Բ խմբի K<sub>b</sub> ենթախմբի մայր օրինակի գրիչը, որի շնորհիւ այդ ենթախմբում պահպանուել է Յիշատակարանը: Ըստ այսմ՝ Օձնեցին իր ժողովածոյում ընդգրկել է Առաքելական կոչուած 3 եւ Թադէոս ու Փիլիպպոս առաքելներին վերագրուած մէկական կանոնախմբեր, զոյգ «Նիկիական» հաւաքածոները, Գանգրայի, Անտիոքի (իրականում՝ Լաւողիկէի), Կոստանդնուպոլսի, Եփեսոսի (2, նաեւ Սեւանտոսի թուղթը) եւ Շահապիվանի ժողովների կանոնները, դասական հայրերից՝ Բարսեղ Կեսարացու (4), Աթանաս եւ Կիւրեղ Աղեքսանդրացիների, Եփրեմ Ասորու եւ Եպիփան Կիպրացու (մէկական), հայ վարդապետներից՝ Գրիգոր Լուսաւորչի (2), Սահակ Պարթեւի (6), Եղիշէի (1) եւ Յովհան Մանդակունու (2) կանոնական երկերը, որոնց աւելացրել է իր 32 կանոնները՝ դրանց «յառաջաբանուած» «Ատենաբանութեամբ» հանդերձ, եւ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից» նախադրութիւնը: Այդ 36 կանոնախմբերից շատերը նա օժտել է յօդուածների համառօտ գլխացանկերով եւ աւարտել աշխատանքը Յիշատակարանով:

3. «Կանոնագիրք Հայոց»-ի համախմբման տարիները յաջողուում է ճշգրտել Յիշատակարանի եւ Օձնեցու միւս՝ «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» երկի տուեալներով: 726 թ. գրուած վերջին երկի՝ մեր կողմից կազմուած գիտա-քննական բնագիրը (7 գրչագրերի համեմատութեամբ) թոյլ է տալիս յաղթահարել այն կարծիքը, թէ «Սակս ժողովոցն»-ը շարադրանքի որոշ անփութութեան պատճառով չի կարող համարուել գիտնական հայրապետի հարազատ ստեղծագործութիւնը. նման կարծիքը գալիս է անմիջականութեամբ տոգորուած երկի շտապողական գնահատականից՝ որպէս հէնց ժողովների մասին պատմական աշխատութիւն: Իրականում Մանագկերտի ժողովի գլխաւոր դաւանական խնդիրը ներկայացնելուց յետոյ հեղինակը հանգամանալիօրէն մտքեր է շարադրում 8 խնդիրների մասին, որոնք նմանուում են ընդարձակ մեկնաբանուած կանոնական դրոյթների: Նոյնատիպ հեղինակային մօտեցում նկատուում է «Ատենաբանութեան» մէջ, որտեղ եւս 17 կանոնական դրոյթներ շարադրուած են ընդարձակ մեկնաբանուած ձեւով, ընդ որում նրան յաջորդում են բուն 32 կանոնները: Սա թոյլ է տալիս իւրայատուկ ոճով «Սակս ժողովոցն» գրուածքը գնահատել որպէս սկիզբը եւ խթանը սեփական կանոնախումբ շարադրելու Օձնեցու գաղափարի՝ ներառելով այն (նախադիր «Ատենաբանութեան» հետ միասին) կանոնական հաւաքածոյի մէջ, որի արտագրմանը նա ձեռնարկել էր դեռեւս կաթողիկոսութեան

գալու նախօրեակին, ինչը նշուած է Յիշատակարանում: Ստացուած ժողովածոյի վերջում յիշատակարան է կցուել արդէն այն բանից յետոյ, երբ աշակերտներն այդ մատեանից գոնէ մէկ արտագրութիւն էին կատարել ու դրել լայն շրջանառութեան մէջ, իսկ հեղինակային բուն օրինակը կամ նրա մի արտագրութիւն հասել է միայն  $K_6$  ենթախմբին:

4.  $Ee_1e_2$  խմբից բացի՝ դասական համակարգման յատկանիշներով ձեռագրերից անկախ լինելու նշաններ ունի նաեւ օձնեցիական բնագրերի ակնյայտ համառօտումներով եւ ուշ կանոնական երկերի (Ղաւիթ Ալաւկաորդու եւն) յաւելումով բնորոշուող ձեռագրերի մի խումբ (շուրջ մեկուկէս տասնեակ գրչագրերի 2 ենթախմբերը՝ D եւ  $d_1$ ): Նրա ընթերցումները միջանկեալ դիրք են գրաւում եւ յանգում են VIII դ. սկզբնօրինակի բաւականին մեծ խմբագրման արդիւնքում ի յայտ եկած մայր օրինակի, որից հետագայում ծագել է նաեւ «դասական» խմբագրութիւնը: Այդ «մեծ» խմբագրման ժամանակ «Կանոնագիրք Հայոց»-ը լրացուել է Օձնեցուց յետոյ ստեղծուած կանոններով, որպիսի առաջինը Սիոն կաթողիկոսինն են (Պարտաւի ժողովի՝ 768 թ.), իսկ երկրորդը՝ «դասական» խմբագրութեան մէջ «Վերջնոյ Սահակայ» անուանումը պահպանած կանոնները ( $Dd_1$  համառօտ խմբում դրանք կորցրել են առաջաբանը եւ վերագրուել Մովսէս Քերթոզաօրը): Դասական խմբագրումն իրագործողներն այդ հեղինակի տակ ընկալել են Սահակ Չորափորեցուն եւ կանոնները տեղադրել Օձնեցու կանոնախմբից առաջ, սակայն դրանց իրական հեղինակը Տայքի եպիսկոպոս Սահակ Մռուտ-Ապուկուրեշն էր: Նա էական դեր է խաղացել IX դ. երկրորդ կէսի դաւանական վէճերում եւ Ջաքարիա Չագեցի կաթողիկոսի վախճանից յետոյ տեղապահի կարգավիճակով տնօրինել հայրապետական աթոռը (մինչեւ 877 թ. Գէորգ Գառնեցու ընտրութիւնը), ինչի հետեւանքով «Վերջնոյ Սահակայ» կանոններից բացի «Հայոց կաթողիկոս» է անուանուել նաեւ իր «Բացայայտութիւն» երկում: «Մեծ» խմբագրումն իրագործողները Օձնեցու ժողովածոն հարստացրել են նաեւ յունաբան ոճով թարգմանուած նոր կանոնական բնագրերով (Անտիոքի, Լաւողիկէի եւ Սարդիկէի ժողովների), բաժանել են V դ. «Ա Նիկիական» անուան տակ միաւորուած 4 ժողովների կանոնները եւ օժտել դրանք առաջաբաններով, դուրս են թողել Լուսաւորչի, Բարսեղի, Մանդակունու մէկական կանոնական թղթեր եւ Օձնեցու «Նախահաւաքումն»-ը, որոշ կանոնախմբեր բաժանել են յօդուածների, միւսներում կատարել համառօտումներ ու առաջաբանային յաւելումներ:

5. Ինչ-որ ժամանակ անց «մեծ» խմբագրութեան մի ամբողջական օրինակի վերջում աւելացուել են 5 նոր կանոնախմբեր (Մակար Երուսաղէմացու, Գրիգոր Աստուածաբանի, Աբրահամ Մամիկոնեանի, Դուինի 645 թ. եւ Աղուէնի ժողովների. «դասական» խմբագրութեան եւ Ա ձեռագրախմբում, եւ Բ-ում դրանց մեծ մասը դասաւորու-

ած է վերջում), կատարուել է խմբագրական որոշ աշխատանք (միացուել են Սահակ Պարթևի հինգ թղթեր, Բարսեղի երկերից երկուսը, գլխացանկերում վերնագրերը շարադրուել են ընդարձակ), իսկ այնուհետեւ իրագործուել է նաեւ ստացուած 40 կանոնախմբերի «դասական» համակարգումը՝ յօդուածների ընդհանուր համարակալմամբ եւ նրանց ընդհանուր ու առարկայական ցանկերի կազմումով: Ղասական խմբագրման ժամանակի ստորին սահմանը ճշտուում է Մակար Երուսաղէմացու եւ Աղուէնի կանոնախմբերի՝ Անանիա Մոկացի կաթողիկոսին յայտնի չլինելու մասին դիտարկմամբ: Հոգեւորականների աստիճանակարգի ու իրաւասութիւնների վերաբերեալ նրա մօտեցման հիմնաւորումները ամենից ուղղակի ձեւով Մակարի կանոններում են ներկայացուած, եւ հնարաւոր չէ պատկերացնել, թէ Խոսրով Անձեւացի եպիսկոպոսին համոզելու ջանքերում յղումներ անելով «Կանոնագիրք Հայոց»-ի 12 կանոնախմբերի վրայ՝ Անանիան կարող էր «վրիպել» դրանք: Վաչագան Աղուանից արքայի կողմից գումարուած Աղուէնի ժողովի կանոններին անձանօթ լինելու կապակցութեամբ կարելուում է այն իրողութիւնը, որ Մոկացին իր «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» թղթում եւս չի յիշում Վաչագանին: Այսպիսով, Մակարի կանոնները «Կանոնագիրք Հայոց»-ի գիտակների տեսադաշտում յայտնուել են շնորհիւ Անձեւացու դէմ բանավէճում դրանց արժեւորման, իսկ Վաչագանի կանոնները՝ շնորհիւ Խաչեն այցելած ժամանակ տեղի ձեռագրապահոցում Մոկացու կատարած պրպտումների (այդպէս նաեւ՝ նոյն արքային ուղղուած Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի կանոնական թուղթը): Անանիայի թղթերում օգտագործուած է «Կանոնագիրք Հայոց»-ի «չխմբագրուած» տարբերակը: Հեղինակի յղած Նիկիայի կանոնների «մետասաներորդ» գլխահամարը համապատասխանում է Ա Նիկիական կանոնախմբի՝ E գրչագրում եւ e<sub>2</sub> ենթախմբում պահպանուած տարբերակին, որը 50 յօդուածով հաւաքածոյ էր: Նրա ձեռքի տակ եղած Կանոնագրքում Նէոկեսարիայի եւ Անկիրիայի կանոնները եւս անուանուած են եղել «Նիկիական»: Իսկ որ «մեծ» խմբագրումը տեղի է ունեցել Մոկացուց որոշ ժամանակ անց, երեւում է 982 թ. իր «Հայոց պատմութիւն»-ը շարադրած Ուխտանէսի կողմից Կոստանդիանոսի թագի մասին նովելում կայսերը հրեշտակների սպասաւորելու առիթով Նիկիայի կանոնների վրայ կատարուած յղումից: Պատմիչի նշած տեղը պահպանուել է Նիկիական կանոնների միայն E, e<sub>1</sub> գրչագրերի եւ e<sub>2</sub> ենթախմբի տարբերակում:

6. «Մեծ» խմբագրութեան հիման վրայ ստեղծուել են դասական համակարգման տարրերը պարունակող երկու տարբերակներ (Ա ձեռագրախմբի 30 եւ Բ-ի 40-ից աւելի ձեռագրերով): Դրանց կանոնախմբերի դասաւորութեան եւ ընթերցումների համեմատութիւնը Ee<sub>1</sub>e<sub>2</sub> եւ Dd<sub>1</sub> խմբերի բնագրերի հետ մերժում է հետազօտողների այն

պնդումները, թե «դասական» խմբագրութեան ձեռագրախմբերից մէկը ծագել է միւսից: Մեծ խմբագրումից յետոյ լրամշակուած (40 միաւորով) մայր օրինակի յանգող եւ դասական համակարգման միանման տարրերով օժտուած, սակայն կանոնախմբերի դասաւորութեամբ եւ յօդուածացանկերով միմեանցից շեղուող երկու տարբերակներն ի յայտ են եկել մի իւրայատուկ իրավիճակում, երբ ընդհանուր նպատակադրումը կամ ուղղակի պատուէրն իրագործել են երկու տարբեր վարդապետական դպրոցներ: «Մեծ» եւ «դասական» խմբագրումների միջեւ ենթադրելի ժամանակամիջոցը կարող էր շատ փոքր լինել. այդ խմբագրութիւնները կարող են վերագրուել անգամ միեւնոյն վարդապետների աշխատանքի երկու յաջորդական փուլերի: Եւ եթէ մեծ խմբագրման ժամանակը ենթադրելի է X դ. վերջերում, ապա դասական խմբագրման իրագործումը պէտք է վերագրել նոյն դարի աւարտին կամ XI դ. առաջին տասնամեակներին: